

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքային դռման իր վերջին նիստում, որ տեղի ունեցավ նոյեմբերի 1-ին, որոշեց քաղաքի շինքի վրա հարկ դնել, վերջնական իրաքանչիւր շան համար մի մի ռուբլի: Բացառութիւն պէտք է կազմեն միայն շրջակայ շինքը: Իւրաքանչիւր շուն պէտք է ունենայ վզակապ և յատուկ նշան: Փողոցում թափառող շները պէտք է հինգ օր պահվեն յատուկ տեղում, որպէս զի նրանց տէրերը կարողանան յետ ստանալ իրանց շներին, իսկ այնուհետև չը վերադառնան: Շները կը սպանվեն: Շներին տեսակները վերաբերութեամբ հարկը զանազանութիւն չէ դնում:

Օպերային երգիչ Ամիրջանեանի մասին, որ այժմ երգում է Պերմի քաղաքի օպերային խումբում, «Пермская Вѣдомость» լրագրի մէջ կարդում ենք համակրական կարծիք: Լրագիրը խօսելով Ամիրջանի գերակատարութեան մասին «Արդա» օպերայի մէջ Ամոնաստրոփի դերում, ասում է, որ երգիչը իսկական արտիստ է՝ մշակված և անորոշ ձայնով, բնորոշ խաղով, բեմական փորձառութեամբ, վայելուչ և տպաւորիչ արտաբերումով: Ուժեղ և կենսալից էր Նեղոսի գետի ավերի տեսարանը արդկայ հետ: «Տրոյական» օպերայի տեսարանը Լուսայի դերում Ամիրջանի ցոյց տուեց իր ուժեղ ձայնը և զգացմունքով երգեցողութիւնը, որի համար արժանացաւ բուռն ծափահարութիւնների: «Իշխան Իգոր» օպերայի մէջ Ամիրջան, ունենալով զլիսաւոր դեր՝ ունեցաւ մեծ աշողութիւն: «НН СНА НН ОУ-ДНА» արժան երգեց շատ լաւ: Միայն ցանկալի է ուժեղ դերերում մի փոքր անելի չելու և աւելի արտայայտիչ խաղ: «Բուրբուլակ» օպերայի մէջ նա գեղեցիկ Տրոյականով է: Արտիստը աւելի և աւելի է զբաւում հասարակութեան համակրութիւնը:

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ կիրակի օր, հոկտեմբերի 7-ին, ցերեկով կը տրվի օպերային ներկայացում, որից դուրսացած արդիւնքը կը յատկացվի Թիֆլիսի առաջին գիմնազիայի ուղեւորող դասարանի չքաւոր աշակերտների օգտին: Ներկայացվելու է Չայկովսկու «Սեւեղին Մեդիկ» օպերան: Տոմսակները վաղորոք ծախվում են առաջին գիմնազիայում, առաւօտեան 9 ժամից մինչև ցերեկվայ 2 ժամը: Ներկայացումը տեղի կունենայ ցերեկվայ ժամը 12-ին: Անշուշտ հասարակութիւնը իր ներկայութեամբ կը նպաստի բարի նպատակի իրագործման:

Ներկայ տարվայ դեկտեմբերի 31-ին վերջանում է այն թղթադրամների ընդունելութեան ժամանակամիջոցը, որոնք լոյս են տեսել 1887 թ.ին, 25, 10 և 5 ռուբլի արժողութեամբ: Այդ որոշված ժամանակից յետոյ յիշեալ թղթադրամները այլ ևս չեն ընդունվի արքունական գանձարաններում:

ՍՂՆԱՅԻՑ մեզ հաղորդում են հետևեալը: «Վար ժամանակ, երբ Սղնախում կենսական միջոցները շատ է ժան էին, չար բաղդից ժամանակի ընթացքում նրանք թանկանում են: Արդիւրի պղծը այժմ ծախվում է 1 ռ. 40 կ. — 1 ռ. 60 կ., մինչդեռ սրանից մօտ տասը տարի առաջ պղծը ծախվում էր 60—70 կ.: Սղնախին ալիւր մատակարարում էին զլիսաւորապէս Զաքարիայ չրջանի լեզգիները: Շարունակ կըրկնվող անբերրութիւնը ստիպեց լեզգիներին դադարեցնել ալիւր բերել Սղնախ ծախելու: Այժմվան բերքը նրանք վեր են առնում իրանց համար, իսկ մնացածը տեղի ու տեղը ծախում: Փայտի սաժէնը ծախվում է 28—30 ռ., առաջ արժէր 20 ռ.: Փայտի թանգութիւնը բացատրվում է նրանով, որ չրջակայ անտառները փակված են ու արգելված է փայտ արտահանել այնտեղից:»

ԹԵՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱՑԻՑ մեզ գրում են հետևեալը: «Այս տարի մեզանում մրգեղէնը շատ առատ էր և թանկ էր: Քաղաքի մէջ միջոց սակաւ է, բայց շատ են բերում քաղաքի շրջակայ լեռնային լեռներից սալով կամ աւանակի բեռնով: Անցեալ տարիները միջոց սակաւ էր և թանկ, դեղձի մի բեռը վաճառվում էր 4—5 ռ., իսկ այս տարի վաճառվեց 1 ռ. 60 կ.—2 ռ., ծիրանը նոյնպէս 4—5 ռ. էր մի քիւղը, իսկ այս տարի 1 ռ. 50 կ. և 2 ռ. քիւղը հաշւած, առանց քիւղի 1 պ. 10 ֆ., կամ 1 պ. 20 ֆ. է. ամենալաւ ճերմակ կեռասը անցեալ տարիները իճառւում էր 5 ռ.—5 ռ. 50 կ., այս տարի 3 ռ. 50 կ.—4 ռ. էր պղծը: Այս պատճառներից մեզանում պատրաստում են զանազան տեսակի

կոնսերվներ և պլուրէ: Այն անձինք, որոնք ունեն մայրաքաղաքի վաճառականների հետ յարաբերութիւն, մեծ քանակութեամբ ուղարկում են Մոսկվա: Վաճառականները «քառասունութ» են կրում. առևտուրն ընկած է մեզանում:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՈՏՐԱՆՍՎԱՍԼԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մի քանի լրագիրների խօսքով, Կապլանդիայի բօքսիտի մէջ սկսված շարժումը ի նպաստ կուր մղող իրանց համայնգեղակցների սպառնալի կերպարանք է ընդունում: Դեռ պատերազմական գործողութիւնները սկսվելուց առաջ Բէլուսի գանազան կէտերում և միացման թիւշնամու գորաբաժինների հետ: Բօքսիտի նպատակին է նախ և առաջ գրաւել Մէֆկինդ և Կիմբէրլէյ. դրանով իրապէս նրանք ձեռք կը գցէին ամբողջ Բէլուսիան: Բօքսիտի ապստամբութեան նշաններ նկատվում են և դէպի հարաւ Օրանսիան գետից և մինչև անդամ Կապլանդիայի խորքերում գտնվող տեղերում: Կատարելապէս սխտեմատիկական բնաւորութիւն ունէր այն ազդեցիկներ, որ տրանսվալեան կառավարութիւնը վարում էր անգլիանպատակ բօքսիտի մէջ: Լուրերին նայելով, տրանսվալեան կառավարութեան գործակալները 6000 ստորաբաժիններ հաւաքեցին Կապլանդիայի բօքսիտի մէջ: Խորագրութիւն տուողները պարտադրութիւն յանձն առան դէնք բարձրացնել իրանց սեփական կառավարութեան դէմ: Մէֆկինդի և Կիմբէրլէյի գրաւումը մեծ օգուտներ կը բերէր բօքսիտի և այն տեսակէտից, որ նրանք ձեռք կը բերէին ուտեստի և ռազմամթերքի մեծ պաշար, որովհետև անգլիացիները անառիկ համարելով այդ դիրքերը, տառաջնակարգ պահեստի կէտեր են դարձրել նրանց:

Վերջին օրերս ստացված մի շարք տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Օրանսիան հանրապետութեան բօքսիտը եւսանդուն գործուհելութիւն են ցոյց տալիս Կապլանդիայի հիւսիսային սահմանի վրա: «Daily News» լրագրի խօսքով, անգլիական իշխանութիւնները կարական յարձակում են սպասում այդ կողմից: Այդ լրագրի Կապլանդիայի թղթակիցը հաղորդում է, որ վճռված է մինչև բաւականաչափ օգնական զօրքեր ստանալը, հեռացնել անգլիական զօրաբաժինները Ստրոմբէրգից, Պաուլսթորֆից և Րումբէրգից:

«National Zeitung» լրագիրը մի շատ տարօրինակ լուր է հաղորդում, որ իբր թէ անգլիացիները Տրանսվալի հետ իրանց պատերազմի համար զինուորներ են հաւաքում Բէլգիայում և Ռէյնի նահանգներում, իսկ Համբուրգում մինչև անգամ փորձեր են անում գերմանական պաշտօնակալ ունեւոր-օֆիցերներին ծառայութեան հրաւիրելու Հարաւային Աֆրիկայում: Այդ առիթով լրագիրը նկատում է. «Գերմանական հողի վրա զօրքեր ժողովելը օտար ծառայութեան համար, ի հարկէ, դատապարտելի վարմունք է: Ուրիշ բան է, եթէ արտասահմանում ընտելութիւն հաստատած գերմանացիները իրանք դէնք կանեն ձեռք իրանց նոր հայրենիքը պաշտպանելու համար:

Պարիզի դուստն հետեւալ վճիռը կայացրեց. «Ի նկատի ունենալով այն, որ իւրաքանչիւր պատերազմ վնասում է մարդկութեան նիւթական և բարոյական չափերին, դուստն, իր համակրութիւնը յայտնելով բօքսիտին, որոնք կուր են մղում իրանց անկախութեան համար, ցաւ է յայտնում այն առիթով, որ Հաագայի խաղաղութեան կոնֆերանսից յետոյ հնարաւոր եղաւ մի այդպիսի պատերազմ, և բողոքում է երօպակական պետութիւնների գործունէութեան եղանակի դէմ, որոնք չը միջամտեցին և այդ արխիւնեղութեան առաջը չառան:»

ՆՍՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, հոկտեմբերի 25-ին
Զարմանալի են մեր երկրի բաները, — անբարեխղճութիւն, ապօրինի գործեր, խաչագողութիւն ամեն մի քայլափոխում: Խաչագողութիւն մանաւանդ, որ մենք սխալմամբ յատկացնում ենք միայն և միայն խեղճ ու կրակ սալմատեցուն, այն տղէտ արաբածին, որը դեռ ևս ուրիշ ոչ մի նպատակ, ուրիշ ոչ մի դիտաւորութիւն աչքի առաջ չունի, եթէ ոչ այդպիսի խաբէխար միջոցներով միայն իր գոյութիւնը պահպանելու: Բայց արեւ ու տես, որ այդ նոզկալի միջոցը արմատացել, միացել է ընդհանրապէս մեր երկրի ազգաբնակչութեան մեծագոյն մասի ուղեղի, խելի, մտքի մէջ, և նոյն իսկ այնպիսի

սի մարդկանց խելքի մէջ, որոնք ճշգրտաւ խօսեցող իրանց լուսաւորված, հիմալի կերպով դատարարված են համարում, և մինչև անգամ ուրիշների դատարարված, կրթութեան գործին զուրկ են կանգնում, և հասարակութեան մէջնորդի պաշտօնն են ձեռք առնում, նրանք դէպի լուսաւորութիւնը առաջնորդելու համար: Զարմանալի է այդ, այն, և մանաւանդ մյն դէպքում, երբ անհատները սկսում են խաղաղ չինել ազգային շահերը և կրօնական — բարոյական գոյացմունքները: Այդ տիւրը երեւոյթը մատնացող անեղով, ես կը դնեմ այժմ «Մշակի» յարգելի ընթերցողների առաջ մի գեղեցիկ փաստ, և թող այնուհետև ամեն մէկը ինքը դատէ:

Նրկու տարի առաջ այստեղ հանգանակութիւն բանալով պ. Արթ. Փանջէկեանցը, մի բաւական կտր գումար հաւաքեց և Մուսաբար գիւղում բաց արեց մի ազգային դպրոց ազգային չէնքի մէջ. և հասա այս տարի մի ոմն բողոքական Մ. Մեխի-Սայեադեանց այդ ազգային հաստատութեան մէջ ուսուցչութեան պաշտօն վարելու համար գնալով այստեղից Մուսաբար, այդ ազգային դպրոցը հաստատակեց որպէս հայ — բողոքականների դպրոց:

Խաչագողութիւն չէ այդ:
Ինչպէս յայտնի է, Սովուշուրալի բողոքը մի քանի շաբաթ է արդէն ապստամբական դրութեան մէջ են գտնվում. վերջին լուրերից էլ մենք իմացանք, որ այնտեղ գրութիւն մնում է նոյնը: Միւշի-Լաշիկեանը, որն այստեղից դիւտրական ոյծերով դնացել էր ապստամբութիւնը խելդելու, ըստ նոր կարգադրութեան, վերադարձաւ ձեռնուռնայն. այժմ դուրը խաղաղութեամբ վերջացնելը մնացել է նոր դատաւորին, որ գնաց այստեղից: Ինչպէս յայտնի է, այնտեղ բիրդերը ապստամբվելով պարսից կառավարութիւնից դրական օրէնք են պահանջում, վերջ դնելու համար անխիղճ կողոպտանքներն ու անիրաւ հարկերին, որ առնում են պարսիկ պաշտօնանները: Կանանցում են նաև, որ դատաւորը իրանցից լինի: Իսկ այդ պահանջները առաջ տանելու և իրագործել տալու համար նրանք, բարեկամ թէ թշնամի, բոլորն էլ երդվել են դուրանի վրա, որ մի դրօշի տակ գործեն:

Այժմ, ինչպէս երևում է, այնտեղի նոր դատաւոր Մամադ Խանը խիստ հրաման է արձակել, որ գան բոլորն էլ հպատակվեն իրան, և որ հակառակ դէպքում շատ թանգ գնով պիտի տուժեն թուրքերը: արդէն նոյն դատաւորի հրամանով էլ բազմաթիւ բողոքական գիւղեր պարսիկների կողմից ենթարկվել են խիստ աւերածութեան և աւարաւորութեան. բայց բողոքը խոնարհելու, զուրկ ծռելու տրամադրութիւն դեռ ևս չեն ցոյց տալիս. տեսնենք թէ վերջը ինչ է լինելու:

Այնտեղ՝ Սովուշուրալում այժմ առևտուր և ալ գործեր բոլորն էլ դադարած են, խանութները, շուկաները բոլորն էլ ժող մի ամիս է, որ մնում են փակված. թուրքերը աշխատում են փախել այնտեղից դէպի Մարաղա, Բիւսար և այլն: Երկուրը շատ մեծ է:

Երէկ, ամսին 24-ին, կիրակի, այստեղ Լիւսալ թաղի երկուսու դպրոցների կողմից հոգեհանգիստ կատարվեց եկեղեցում և Թամարեան օրիորդաց դպրոցում Թումանեան տոնի Թամար տիկնոջ համար, որի անուամբ է կառուցված վերոյիշեալ դպրոցը: Հոգեհանգիստից յետոյ նոյն դպրոցի կօրըրդները ընթանալուց տեղի ունեցաւ խօսեց տեսուչ Տ. Ռաչմաճեան՝ գովելով, դրուատելով Թումանեանց բարի անուշը և մատնացող անեղով մի քանի պակասութիւնները, մանաւանդ անխաբիւր մանկապարտէզի վրա, որ այս տարի ճարահատված, վարժուհի չը լինելու պատճառով, փակել է Թամարի Հայունհաց ընկերութիւնը:

Ա. Յ. Ասման

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ռուսաց և գերմանական Կայսրերի տեսակցութիւնը Պոտսդամում Ֆրանսիական լրագիրները մէջ ահագին բանալի է առաջ բերել: Նացիօնալական լրագիրների մի մասը, որ դեռ չէ հայտնի այն վերաւորանքի հետ, որ անգլիացիները հասցրին Ֆրանսիային՝ Փաշտօնում, ողբում է այդ տեսակցութիւնը, յոյս դնելով, որ Գերմանիան՝ Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ, կարող կը լինի զսպել բրիտանացիների յափշտակիչ ձգտումները: «Eclair» լրագիրը, որ համարվում է Ֆրանսիական ընդհանուր շտաբի օրգան, մի առանձին եռանդով քաղաքում է Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ հաշտութիւն, առաւել ևս զաղթականական քաղաքականութեան հարցերում: Բայց արմատական և սոցիալիստական մասնուր վճռական կերպով բողոքում է այդ բանի դէմ ժօրէս, «Peuple Republique» լրագրում, բացականչում է. «Անս թէ մենք ինչ օրի հասանք: Մեր ընդհա-

նուր շտաբի կիսապաշտօնական օրգանը առաջարկում է Ֆրանսիային դաշնակցութիւն կապել Վիլհելմ II-ի հետ Անգլիայի դէմ: Ըստ երևոյթին նա դիմում է յետադիմական նպատակներին: Սթէ տեղի ունենայ այդպիսի մի նոր դաշնակցութիւն, անկասկած մեր գնեւրանքը և մեր դոն-Բազիլիօնը չափազանց կուրախանան, բայց ինչ կը լինի այդ դէպքում Ֆրանսիայի դրութիւնը: Այդ յօդուածի առիթով Միլլուա, «Patrie» լրագրում, պատասխանում է. «Միթէ ժօրէս յանկանում է սպասել այն բօպէին, երբ Անգլիան բողոքով կը յաղեցնի իր արտօրակը, և ապա պահանջել նրանից, որ նա յարգէ ուրիշ ազգերի իրաւունքը: Ժամանակով, ի հարկէ, բոլոր եւրօպական պետութիւնները կը միանան, որպէս զի վերջ դնեն Անգլիայի ձգտումներին, բայց միթէ աւելի լաւ չի լինի այդ անել հէնց՝ այժմ, մինչև որ Անգլիան դեռ չէ կազդուրվել Աֆրիկայում կրած պարտութիւններից:»

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱՎԱՍԼՈՒԹԻՒՆՆԵՐ

1 նոյեմբերի

ՄՈՍԿՎԱ: Վաճառական Տիւրինի կեղծ մուրհակների գործը ընկելուց յետոյ, դատարանը դատապարտեց Տիւրինին, Նիկոլայ Բէլուսովին և Բիկովին բոլոր իրաւունքներից զրկելուն և բերդարգելութեան՝ առաջին երկուսին երեք տարով, իսկ Բիկովին երեք տարով և 6 ամսով:

ՍԴԵՍՍԱ: Այսօր առաւօտեան գնացքով ճանապարհ ընկաւ Պետերբուրգ Միշերկական ծովի նաւատորմի հրամանատար փոխ-ծովագետ Սկրիդով:

ՕՐԵՍՍԱ: Հնգյան զնացքով ժամանեց Մեծ Իշխան Գէօրգի Միխայլովիչ և չրջեց քաղաքում: Կէսօրից յետոյ 5 ժամին Մեծ Իշխան Ալեքսանդր Միխայլովիչի սպասող «Թամար» զբօսանաւում նա գնում է Այսոօր, Դրիմ:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 30 հոկտեմբերի: Փագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնա և արքեպիսկոպիտ Պետրովիչ Օրդնաբուրգսկի այցելեցին այսօր պրօֆէսօր Ֆինզէնի լուսաբուժարանը: Պրինցը ժամանեց այստեղ՝ Ֆինզէնի լուսաբուժութեան մեթօդի հետ ծանօթանալու նպատակով: Պրինցին ուղեկցում են պրօֆէսօր Չիտովիչ, բժշկական Բօտկին և փորձնական բժշկականութեան կայսերական ինստիտուտի ղերեկտօր Լուկինով: Ֆինզէն ցոյց էր տալիս ինստիտուտը Թագուհուն և արքեպիսկոպիտին, որոնք մէկ ժամի չափ մնացին ինստիտուտում:

ԿԱՊԵՏԱՊՏ, 31 հոկտեմբերի: «Բէյտէրի գործակալութիւն» «Gascon» ապրանքատար գնացքը գվարդիայի երկրորդ բաւալիօնով և ուրիշ զօրամասերով այսօր կէսօրից յետ անցաւ դէպի Դէլաւա ծովածոցը:

ԿՈՒՐՍՈՒ (բրիտանական Բէլուսիանդ), 22 հոկտեմբերի: «Բէյտէրի գործակալութիւն» Մէֆկինդից եկած տեղադրի սուրհանդակը հաղորդում է, որ այնտեղ ամեն բան բարեյալով է: ԲՐԻՒՍՍԷԼ: Բէլգիական սանիտարական բաժինը, բաղկացած տասը բժիշկներից և 30 սանիտարներից, նոյեմբերի 10-ին Ամստերդամից ուղևորվում է Թարաւային Աֆրիկա:

ԽԱՐԿՎ: Խաբկովի գրադարանութեան ընկերութիւնը միջնորդում է կազմել Մոսկվայում առաջին համագումար ժողով արտաւոյ-դատարանեան կրթութեան վերաբերմամբ:

ԼՕՆՊՈՆ: «Բէյտէրի գործակալութիւն» Մէֆկինդից, հոկտեմբերի 18-ից, ստացված պաշտօնական հեռագրի համաձայն, թշնամին աւելի խիստ կերպով պաշարեց քաղաքը: Մէֆկինդից երկու մղոն հիւսիս գտնվող երկաթուղին քանդեց թշնամին գինամիտով: Քաղաքի ուղեւորները շարունակվում է, բայց շատ վնաս չէ հասցնում: Մէֆկինդից, հոկտեմբերի 19-ից ստացված հեռագրից երևում է, որ թշնամին փորձ արեց յարձակում գործել քաղաքի վրա: չը նայելով հարաւաֆրիկական ոստիկանութեան զօրքերի արձակած ռաբային կրակին, բօքսիտը շատ քաջ էին պատերազմում: Թշնամին զգալի կորուստներ կրեց: Անգլիայի կողմից սպանվեցին երկու կապիտան և երեք զինուոր, վիրաւորվեցին հինգ զինուորներ:

ԲԵՐԼԻՆ: «Վօլֆ» գործակալութիւնը: «Vossische Zeitung» լրագրի տեղեկութիւնների համեմատ, Բրիտանից հեռագրում են, որ այնտեղի արմատական գործակալը տեղեկութիւն է ստացել, թէ գնեւրալ Բուլէրի եկաւ Պուրբան, ուր անցեալ ուրբաթ ամի իշան 4000 բրիտանական զօրքեր: Այդ զօրքերը ծովային հետակ բրիգադայի հետ միասին, կամաւորների երկու գնդով և կապեան թնդանօթաձիգ զօրքի երեք բաւարեաններով, ընդհանր 10,000 մարդ, կերթան ազատելու Ռայտին, որը նոյն այդ ժամանակ կաշխատի դուրս գալ բերդից դէպի Կօլէնգօ:

2 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ Սենատը գաղտնի խորհրդական Զակրևի վրա արձակվում է ծառայությունից: Օրինակ: Նախագահը ընկալեց Պետերբուրգ կոմս Վորոնցով-Դաշկով:

ԲԵՐԼԻՆԻ Լրագիրներին կապառառուից հաղորդում են, որ աֆրիկանդները ապստամբական տրամադրություն են գիշերային շարժման ժամանակ երկաթուղիների վրա արած յանցաւոր փորձերի պատճառով հաղորդակցությունը բոլոր երկաթուղիներով դեպի հիսթիա դադարեցրված է: Ասում են, որ պաշարման դրություն կը հրատարակվի ամբողջ կապառառույթում աֆրիկանդներին հնազանդեցնելու նպատակով:

ԼՕՆԻՍՆԻ Գերմանական դեսպանը տեղեկացրեց Գորտսմուտի քաղաքային խորհրդին, որ կայսրը ստիպված է մերժել այն ուղերձը, որ մտադրություն կայ մատուցանել իրան, որովհետև նրա այցելությունը Սնգլիային խիստ մասնաւոր բնույթով է կունենայ:

ՊԱՐԻՉԻ Բարձրագույն դատարանը: Հրապարակական նիստը յետաձգված է մինչև չորեքշաբթի:

Ժիւլ Լէվտորի կարգացած դասախոսությունը վերջնական յետոյ, պատգամաւոր նացիոնալիստ Լազրի կալանաւորվեց Վալդեկ-Րուստի մասին վերաբերական կարծիք յայտնելու համար, բայց յետոյ ազատ թողնվեց:

ՆԻՃՆԻՆՆՈՎՊՐՈՐԿԻ Էփորով և Նարսոյը ընկերության գործերի առիթով պարտատէրերի ժողովը այն կարծիքը յայտնեց, թէ պէտք է վարչություն հաստատել: Բաւանսը 6½ միլիոն բուրլի է: Ընկերությունը մէկ միլիոն պարտք ունի: Ընկերության այդ գրութեան պատճառը բանկային կրեդիտի կրճատումն է:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ Ազնուական կալուածական բանկի գրաւական թղթերի քանակները տիրաժը: Սերիաների համարները:

2179, 225, 13051, 12159, 15056, 14879, 6483, 2001, 15649, 7767, 7988, 11143, 11209, 12754, 11081, 2944, 6048, 2068, 2334, 1560, 7385, 12908, 13074, 2724, 2111, 5173, 10444, 15460, 369, 8854, 15829, 11970, 7382, 6044, 11087, 5494, 8708, 2892, 5541, 526, 14454, 5080, 1931, 754, 13993, 7554, 4847, 9963, 6742, 4721, 12222, 6817, 13, 200, 15723, 2302, 8812, 13731, 10231, 10413, 10872, 6386, 13826, 1487, 233, 1782, 66, 5958, 3125, 11306, 1972, 7520, 12730, 11898, 7160, 4670, 12768, 1733, 14497, 15456, 974, 10357, 13932, 5894, 7910, 5703, 1218, 7997, 936, 851, 9938, 9289, 2705, 10923, 12844, 10315, 13299, 5360, 1971, 14364, 8705, 4883, 11402, 2097, 2343, 7363, 1386, 8739, 4074, 3926, 13276, 923, 10826, 4372, 3161, 8339, 11422, 2056, 6707, 15664, 4679, 13758, 12511, 627, 12935, 1732, 11447, 4073, 2918, 4361, 6900, 9166, 4185, 15197, 1925, 14189, 12910, 13694, 6731, 14456, 2104, 10683, 9785, 8931, 8767, 6269, 8789, 3862, 11697, 10269, 1481, 13574, 15462, 11111, 523, 2532, 4986, 1099, 6543, 15383, 4374, 11548, 7224, 5940, 12542, 6257, 13116, 3900, 12946, 8704, 5466, 4337, 2607, 9657, 1887, 7772, 9788, 11427, 9132, 9835, 2620, 14707, 12304, 6968, 14455, 7016, 10517, 8913, 9456, 14550, 12013, 10758, 10313, 13222, 13428, 4786, 4750, 13083, 3773, 9148, 15541, 2796, 13360, 13805, 13929, 12335, 7009, 11291, 5080, 3328, 7176, 2158, 15883, 3087, 14489, 5002, 2770, 2405, 8091, 15716, 13379, 8188, 9940, 2518, 4378:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՅԻ ՏԻԳՐԱՆԱՆ ԻՍԱԶԱԿ ՄՆԻԿԻ-ԱՂԱՄԱԼԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՐՎՈՒՄ

Անդրկասպիական նահանգի հանդուս, ընտանեկան հանգամանքներից ստիպված, ՄԱՆՎՈՒՄ Է ԴԵՆԱՏՈՒՆ յատուկ բաժանմունքով, դեղավաճառանցի խանութով և անով, 26,000 ռուբլով, որոնցից 10,000 ռուբլի կանխիկ, իսկ 16,000 ռ. մաս մաս վճարումներով, հաշվելով 6%: Տարեկան եկամուտն է՝ 9,399 դեղատուներով մոտ 16,000 ռուբլի: Հասցեն. Մերք, Аптекарь. 6—10

Լոյս տեսան

Մ. ՉՄԵԿԵԱՆԻ

1900 թ. ՕՐԱՅՈՅՑՆԵՐԸ

Յանկացողները թող շտապեն՝ որպէս զի մասնակից կարողանանք հասցնել: Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Զմշկեան: (Ե. չ.) 4—20

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ

„Վ. ա. ն. յ. Ս. ա. գ.“

Բ. մաս

Գ. ՇԵՐԷՆՑԻ

Գինն է 75 կ.

Ա. և Բ. մասերը միասին 1 ռ. 50 կոպէկ:

Գիմեր՝ Тифлис, Тифлисское Общество Издаия армянских книг, կամ Tiflis (Russie) Societe de la publication des livres Arméniens. 9—10

Ս. ՐԱԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՕՏԱՆԵԼԻՔ ԳՆՐԱՆՆԵՐ ՀՈՎԵՐ ՀՈՏԱԼԵՑ ԶՐԵՐ, ՍԱՊՈՆ

МОСКВА

1) Пассаж Солодовникова.
2) Тверская, Д. Спирidonova.
С.-ПЕТЕРБУРГ.
Невский 18.

Նաև Ռուսաստանի յայտնի դեղատներում: М. 59805

Պօլսի գերմանական կոլեջը աւարտած, պատուաւոր ընտանիքից

մի հայ օրիորդ,

որ տիրապետում է գերմաներէն և հայերէն լեզուներին, լաւ գիտէ և ֆրանսերէն, ցանկանում է տան վարժուհու և դաստիարակչուհու պաշտօն ունենալ հայ ընտանիքներում: Ցանկացողները թող դիմեն «Մշակի» խմբագրատուն: (Ե. չ.) 3—4

КАПИЛЕРИНЪ

НОВОЕ СОВЕРШЕННО БЕЗВРЕДНОЕ СРЕДСТВО ВОЗВРАЩАЕТЪ СЫДЫМЪ ВОЛОСАМЪ ИХЪ ПРЕЖНІЙ ЦВѢТЪ ЦѢНА 2 РУБ.

A.CIY И К.

М. 109538

ԲԱՆԴՈՒՄՆԻ ՔԱՂԱՔ

Մարդարեանի գործարանում բացված է ԿԵՐՈՍԻՆԻ, ԳԱԶՈՒԼԻՆԻ, ՍՈՒՆԱՐԻ ԻՊԼԻ և այլ ՆԱԻԹԱՅԻՆ ՄԼԱՑՈՐԿՆԵՐԻ

ՊԱՆԵՍ

Ցանկացողներին կարելի է տալ և վազօններով: Դիմել՝ Черный городокъ, Михаилу Канжунову, заводъ Марварова. (Ե. չ.) 7—10

ԲՈՂՎ. ՎԱՅՆՆ ՍՐԺՐՈՒՆԻ

Վերանորոգել է հիւանդների ընդունելութիւնը բժի, կոկորդի, ըթի և ականջի հիւանդությունների համար իր նոր բնակարանում, Սոլովակ, Սերգիեվսկի փող., տ. Մովսիսովի: 7—10

Հարկաւոր է ՀԱՅ ՎԵՐԺՈՒՅԻ փորթի կրեկաներին հսկելու և դաստիարակելու համար: Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը: 5—5

ՍԱՐԱՏՈՎԻ ՍԱՐՊԻՆԿԱ

1900 թ.

330

Նմուշներ այրումի մէջ

Նոյեմբերից
Ուղարկվում է 56 կ. մարկաներով
ԱՆԻՐԷՑ ԲԷՆԻՔԻ և ՈՐԴԻՔ
աւտորական տուն
Москва, Петровка,

Մանր պատուէրները ուղարկվում են բոլոր տեղերը 2 ՐԻ
№ 160690. 1—3

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“ ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գործիչների Պրոսպեկտի վրա, առաջին գիմնապիայի հանդէպ, տուն Գաշուկի տուրք Գէորգ եկեղեցու:

Ստացել ենք մեծ բանակութեամբ աշնան ային և ձմերային սէզօնի համար՝

Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ:

Ստացված է նոյնպէս ԳՐԱՄԷՆԻՑ ԶԳԵՍՏՆԵՐ. — դատաւարական, ուսուցչական և աշակերտական — կրօնական և բնական ուսումնարանների: Ունենալով մեծ բանակութեամբ մատերիաներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ: Գները ՎԵՐՋՆԱԿԱՆ են և անհամեմատ էժան: Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն պատուէր 1/6 մասը: 19—40



Բժշկարար Կեֆիր եւ Կուճիս

Օ. ԿՕՐՕՆԱ


Թողալով Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և որմանացած երկու մէղաւն երբի՝ երկու ցուցանողներում, ընտիր կէֆիր և կուճիս պատրաստելու համար: Կարելի է ստանալ Օ. Կորօնայի գործարանում, Լորիս-Մէլիքեան փողոց, տուն Զուբալովի և բաժանմունքում, Միքայելեան փողոց, օֆիցներների տնտեսական ընկերության խանութին կից: Աւտոգիդներին, ուսանողներին և տնտեսական ընկ, անդամներին կը լինի զիջում: Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայացնեն բժշկից առանձին դեղատոմս: Ցանկացողներին՝ կէֆիր ու կուճիս կարելի է տուն ուղարկել: 16—50

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ

ШОКОЛАДЪ

ФАБР. С. СІУ И К. МОСКВА.

М. 35,967 (.)



ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների:

ԲԻՐՈՐ ՅԱՆՁՆ Է ՍՈՐՈՒՄ կառուցանել Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ ԳԱԶԱՇՈՐԴԻ-ԶՐԱՆՑԳՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրոտէխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագրիներ, տէլեֆօնների, լուսաւորութեան, տրամվայների և այլ ժի հաղորդելու հեռաւորութեան վրա:

ԹԻՖԼԻՍԻՆ-ՏԵԼԵԳՐԱԿԱՆ ԻԽԱՐՈ Ինժեներ Ն. Բ. Պասսեկի

Тифлис, Михайловская ул. № 116.

Հասցէն հեռագիրների համար. Тифлис—

Пассеку.

ՏԵԼԵՖՈՆ № 642.

ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ և ՏԱՎԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐԳԵԼ ա մեն տեսակ տուրքիներ, խողովակներ, մեքենաներ և ջրաներ:

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ և բ կ ա թ է կ ա մ աւ ր ջ ն եր և տնակներ:

ՑԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ (Ե. չ.) 46—100

11